ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԴԱՎԻԹ ՍԱՀԱԿՅԱՆԻ՝ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՓԱՐԻԶ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**
   Դավիթ Սահակյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Փարիզ), 2023թ. փետրվարի 23-ից 25-ը:

4. **Հրավիրող կողմը.**
   Ֆրանսիա Հայաստան առևտրաարդյունաբերական պալատ:

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն «Ֆրանսիա-Հայաստան առաջին տնտեսական գագաթնաժողովին»:

6. **Քննարկված թեմաները.**

2023թ. փետրվարի 24-ին կայացել է «Ֆրանսիա-Հայաստան առաջին տնտեսական գագաթնաժողովը», որի շրջանակներում բացման խոսքով հանդես է եկել «Փարիզ Իլ-դը-Ֆրանս» առևտրաարդյունաբերական պալատի նախագահ Դոմինիք Ղեստինոն: Միաժամանակ գագաթնաժողովի շրջանակներում ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանի կողմից ներկայացվել է «Հայկական տնտեսության մարտահրավերներն ու հնարավորությունները», իսկ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցչի կողմից «Ֆրանս-հայկական երկկողմ հարաբերությունները» թեմաներով շնորհանդեսներ: Գագաթնաժողովի շրջանակներում ներկայացվել է Հայաստանի գործարար միջավայրը, այնուհետև կայացել են երկու կլոր սեղան-քննարկումներ՝ համապատասխանաբար «Բարձր տեխնոլոգիական տնտեսություն» և «Կայուն տնտեսություն» թեմաներով: «Բարձր տեխնոլոգիական տնտեսություն» թեմայով կլոր սեղանի բանախոսներն են եղել «Ապագա տեխնոլոգիաներ» ընկերության գործադիր տնօրեն Միշել

Դավուդյանը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը, «Թուլուզ 3» համալսարանի նախագահ Ժան-Մարկ Բրոտոն, «Ինժեներական քաղաքի» նախագահ Արամ Սալաթյանը և «Թիմ Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ գործադիր տնօրեն Ալեքսանդր Եսայանը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Միջոցառման ընթացքում կազմակերպված «Բարձր տեխնոլոգիական տնտեսություն» խորագրով թեմատիկ կլոր սեղան-քննարկման շրջանակներում Դավիթ Սահակյանը հանդես է եկել որպես բանախոս՝ ներկայացնելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործունեությունը: Մասնավորապես՝ անդրադարձ է կատարվել ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտային ընկերություններին տրամադրվող արտոնություններին, ստարտափների ներդրումների խթանման համար ազգային վենչուրային ֆոնդի ստեղծման գործընթացին, էկոհամակարգի բարելավման նպատակով ինկուբատորների և աքսելերատորների հետ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության համագործակցության ձևաչափին, բուհ-մասնավոր համագործակցության շրջանակներում մասնագետների ուսուցման և վերապատրաստման աշխատանքներին, առաջիկայում ՀՀ-ում կայանալիք ոլորտային միջոցառումներին և ցուցահանդեսներին:

Հայաստանում տնտեսական գործունեություն իրականացնել ցանկացող ֆրանսիական մի շարք մասնակից-ընկերությունների ներկայացվել է Հայաստանի տնտեսական ներուժը, Ֆրանսիայի և Հայաստանի միջև ոլորտային համագործակցության ուղղություններն ու հեռանկարները:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը քննարկում է ունեցել Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Անն Լույոյի հետ: Քննարկվել է առաջիկայում մի շարք ֆրանսիական ընկերությունների ներկայացուցիչների հնարավոր այցը Հայաստան, միաժամանակ, Դավիթ Սահակյանի կողմից առաջարկվել է հնարավորության դեպքում ընկերությունների շարքում ներգրավել նաև ֆրանսիական վենչուրային ընկերությունների ներկայացուցիչների:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակելու քննարկումները Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության միջև կապի, թվայնացման, տեղեկատվական տեխնոլոգիաների, նորարարության և այլ ոլորտներում համագործակցության ընդլայնմանն ուղղված ծրագրեր և նախագծեր իրականացնելու վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

ԴԱՎԻԹ ՍԱՀԱԿՅԱՆ
28.02.2023թ.